ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՄՖԵՎ-80

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «11» հոկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի սամբոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս նախագահ Միքայել Հայրապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1558-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «1041Մեծ նվաճումների սպորտ» ծրագիր 11038 «2022 թ. Երևանում կայանալիք սամբոյի դեռահասների, պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնության անցկացման ապահովում» միջոցառումը անցկացնելու նպատակով կազմակերպությանը գումար հատկացնելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԱՐԿԱՆ

1.1. սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է 2022 թ. Երևանում կայանալիք սամբոյի դեռահասների, պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնության անցկացման ապահովման համար կազմակերպությանը տրամադրել՝ 294,714,500 (երկու հարյուր իննսունչորս միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կատարողը պարտավորվում է սույն միջոցառումն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կատարողի կողմից իրականացվելիք միջոցառումը ներկայացված են սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N1-ում և Հավելված N2-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինը պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1041 Մեծ նվաճումների սպորտ» ծրագիր 11038 «2022 թ. Երևանում կայանալիք սամբոյի դեռահասների, պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնության անցկացման ապահովում» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները,

2.2. ***Պետական մարմինն իրավունք ունի՝***

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,
2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,
2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,
2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:
2.3. Կատարողը պարտավոր է՝
2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,
2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,
2.3.3. Սույն Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետներում Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,
2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,
2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:
2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,
2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.3.9. որոշմամբ հատկացված գումարներով ձեռք բերված գույքը այլ մարզական միջոցառումների համար կարող է օգտագործվել բացառապես Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրավոր թույլտվությամբ:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում 294,714,500 (երկու հարյուր իննսունչորս միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի N 1,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելուց հետո՝ Կատարողի գանձապետական հաշվեհամարին փոխանցելու միջոցով,

3.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ;

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը Հավելված N 2) և հաշվետվությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին,

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը,

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ,

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը,

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են Պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին,

5.6. Պետական մարմինը կարող է սույն կետով նախատեսված տույժերն ու տուգանքները հաշվարկել և հաշվանցել Կատարողին վճարվելիք գումարներից:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թ. Հոկտեմբերի 31-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2022 թվականի դեկտեմբերի 10-ը:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

7.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

10.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 6 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի սամբոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2	ք. Երևան, Նար-Դոսի 53,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011041226	Հ/Հ՝ 11500747514400
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ՝ 06926461
	Էլ. փոստ՝ info@sambo.am
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Գ. Սաֆարյան	Մ. Հայրապետյան
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N1
2022 թ. հոկտեմբերի -ին
կնքված N _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը(դրամ)
1.	«1041Մեծ նվաճումների սպորտ» ծրագիր 11038 «2022 թ. Երևանում կայանալիք սամբոյի դեռահասների, պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնության անցկացման ապահովում» միջոցառում:	«Հայաստանի սամբոյի ֆեդերացիա» ՀԿ-ին գումարի հատկացում՝ 2022 թ. Երևանում կայանալիք սամբոյի դեռահասների, պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնության անցկացման ապահովման համար:	Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1558-Ն որոշմամբ «Հայաստանի սամբոյի ֆեդերացիա» ՀԿ-ին հատկացվելիք 294,714.5 հազար դրամն ուղղվելու է 2022 թ. Երևանում կայանալիք սամբոյի դեռահասների, պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնության անցկացման ապահովման համար:	**Արդյունքները** Հայաստանի Հանրապետության 2022 թվականի հոկտեմբերի 14-17-ը Երևանում անցկացվելիք սամբոյի դեռահասների, պատանիների ու երիտասարդների աշխարհի առաջնության անցկացումը կնպաստի սամբո մարզաձևի զարգացմանը, մասսայականցմանը, արդյունքների բարձրացմանը և մրցանակային տեղերի գրավմանը: Մասնակից երկրների թիվ, երկիր-40, Մասնակից մարզիկների թիվ, մարդ-650	31.10.2022 թ.	294,714,500
Ընդամենը դրամ						294,714,500

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011041226
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Սաֆարյան
Կ. S.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի սամբոյի ֆեդերացիա»
հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Նար-Դոսի 53,
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500747514400
ՀՎՀՀ՝ 06926461
Էլ. փոստ՝ info@sambo.am
Նախագահ՝

_____ Ս. Հայրապետյան
Կ. S.

Հաստատված N 2
2022 թ. հոկտեմբերի _____-ին
կնքված N _____

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՍԱՄԲՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ, ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր

14-17 հոկտեմբերի 2022թ.

Հ/Հ	Ծախսեր /ՀՀ պետական բյուջեից/	Չափման միավոր	քանակ	օր	Գումար /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	Լոգո տպագրումով /բեջեր, պատվոգրեր, լոգո գրիչներ, բլոկնոտներ, պայուսակներ լոգոյով/	ծառայություն	1		3 000 000	3 000 000
2	Գովազդային ծառայություններ, իրազեկում	ծառայություն	1		6 000 000	6 000 000
3	ըմբշամարտի գորգերի բեռնափոխադրում Մոսկվայից Երևան	ծառայություն	1		850 000	850 000
4	Ըմբշամարտի տատամիի ձեռքբերում Մոսկվայից	ապրանք	88		40 000	3 520 000
5	Ըմբշամարտի տատամիի բեռնափոխադրում Մոսկվայից	ծառայություն	1		850 000	850 000
6	Մաքսազերծման հետ կապված ծախսեր, բռոքերի ծառայություն	ծառայություն	1		1 000 000	1 000 000
7	Դոպինգ-վերահսկողություն /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		2 951 400	2 951 400
8	**Բուժ ծառայություն /պայմանագրային/, այդ թվում**					
8.1	Բուժ ծառայություն /2 շտապ օգնության միավոր/	ծառայություն	1			480 000
8.2	Բուժ ծառայություն դահլիճում /առնվազն 1 տղամարդ, 1 կին/					
8.3	Բուժ ծառայություն կշռման օրը հյուրանոցներում /մեկ բժիշկ, մեկ բուժքույր/					
9	Դեղատուփ /մարզիկների, հատուկ, 1 օգնություն/	ապրանք	10		50 000	500 000
10	Էլեկտրոնային կշեռքների ստուգաչափում լիցենզավորված ընկերության կողմից	ծառայություն	1		200 000	200 000
11	Դահլիճի և հարակից օբյեկտների անվտանգություն - /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		10 000 000	10 000 000
12	Մարզահամալիրի մարզադահլիճի վարձակալություն /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		16 000 000	16 000 000
13	Մարզման տարածքների վարձակալում /Դինամո/ 3 օր	ծառայություն	1		500 000	500 000
14	ՄՀՀ բրենդավորում /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		10 000 000	10 000 000
15	Գնումների համակարգող /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		750 000	750 000
16	Հաշվապահ /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		1 000 000	1 000 000
17	Իրավաբան /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		400 000	400 000
18	Ծրագրերի ղեկավարման խորհրդատվական ծառայություն /համաձայն պայմանագրի/	ծառայություն	1		1 500 000	1 500 000
19	Ֆինանսական խորհրդատվության ծառայություն	ծառայություն	1		1 000 000	1 000 000
20	Հասարակության հետ կապերի մասնագետ	ծառայություն	1		750 000	750 000
21	Թարգմանիչ /1 թարգմանիչ 5 հյուրերի համար/ հասարակ-5000 դր. մեկ ժամվա համար, սինխրոն - մինչև 22000 դր /11,11-17,11,2022, օրեկան 8 ժամ	մարդ	3	8	22 000	4 224 000
22	Մեդալներ մրցանակակիր, համաձայն կանոնադրության	ապրանք	220		35 000	7 700 000
23	Մարզիկների միջազգային լիցենզիաներ	հատ	47		25 000	1 175 000
24	Գրասենյակային պիտույքներ /մեկ անձի հաշվարկով՝մինչև 3000 դրամ, հավաքացու	ապրանք	37		3 000	111 000
25	Մարզահամազգեստ /լրակազմ/	ապրանք	65		150 000	9 750 000
26	Մարզահամազգեստ /KIMONO/ , Մոսկվաից	ապրանք	65		100 000	6 500 000
27	Համազգեստ /կարմիր/ ՀՀ մարզիկների համար, Մոսկվաից	ապրանք	65		70 000	4 550 000
28	Մաքսազերծում, բրոքերի ծառայություն՝ Համազգեստ /կարմիր/ և կիմոնո ՀՀ մարզիկների համար	ծառայություն	1		4 000 000	4 000 000
29	Առաջնության բացման հանդիսավոր արարողություն/տեխնիկայի և տեխնոլոգիաների ապահովում	ծառայություն	1		15 000 000	15 000 000
30	Տեղեկատվական անվտանգության ապահովում/Առաջնության տեխնիկական սպասարկում	ծառայություն	1		6 000 000	6 000 000
31	Բեմարթակի և այլ դեկորների պատրաստում	ծառայություն	1		12 000 000	12 000 000
32	"PRESS" տարածքի, "VIP" տարածքի,տարածքի ստեղծում, տեղ. հագեցվածություն և կահավորում	ծառայություն	1		5 000 000	5 000 000
33	"WARM UP" տարածքի ստեղծում, մարզիկների նախապատրաստման գոտի	ծառայություն	1		5 000 000	5 000 000
34	"INFO" անկյունների ստեղծում, պատվիրակությունների համաժողովների կազմակերպում հյուրանոցներում /45 պատվիրակություն/	ծառայություն	1		5 000 000	5 000 000
35	Քեթրինգ /սնունդի ապահովում/ սրճի ընդմիջում	մարդ	800	5	1 500	6 000 000
36	Կազմկոմիտեի ղեկավար անդամների և պատասխանատուների մատուցված ծառայությունների հատուցում /45 պատասխանատու ըստ պատվիրակությունների,և 7 կոորդինատոր	ծառայություն	1		10 000 000	10 000 000
37	Կամավորների սնունդի ծախսեր /200 մարդ/	մարդ	200	7	3 000	4 200 000
38	Հուշանվերներ ֆեդերացիաների ղեկավարների, ՖԻԱՍ գործկոմի անդամների համար /ղեկավար կազմ/	հատ	120		20 000	2 400 000
39	Հուշանվերներ պատվիրակության մյուս անդամների համար	հատ	220		10 000	2 200 000
40	Սնունդ երիտասարդ մարզիկների	մարդ	18	7	2 500	315 000
41	Սնունդ պատանի և դեռահաս մարզիկների	մարդ	36	7	2 000	504 000
42	Սնունդ մարզիչների	մարդ	8	7	2 500	140 000
43	Գիշերավարձ մասնակիցների համար	մարդ	62	6	5 000	1 860 000
44	Տրանսպորտ ավտոբուս՝ Երևան-Գառնի-Գեղարդ-Երևան 70 հոքի, 19 տեղանոց 3 ավտոբուս, *210000 դրամ	ծառայություն	1		630 000	630 000
45	Պաշտոնական հյուրասիրություն ՝ ք. Գառնի	մարդ	100	1	12 500	1 250 000
46	Տրանսպորտ ավտոբուս՝ Երևան-Սևան-Երևան70 հոքի, 19 տեղանոց 3 ավտոբուս, *210000 դրամ	ծառայություն	1		630 000	630 000
47	Պաշտոնական հյուրասիրություն ՝ ք.Սևան	մարդ	100	1	12 500	1 250 000
48	Տրանսպորտ միկրոավտոբուս VIP Sprinter լրագրողների, ՖԻԱՍ աշխատակիցների համար, Օդանավակայան-Հյուրանոցներ-Օդանավակայան, Հյուրանոցի-մրցման վայր-Հյուրանոց, 8 օր, 5 միկրոավտոբուս, 210000 դրամ	ծառայություն	1		8 400 000	8 400 000
49	Բացման և փակման օրերին Պաշտոնական ճաշ /բանկետ/ ՖԻԱՍ գործկոմի անդամների, ֆեդերացիաների ղեկավարների, VIP-հյուրերի, ՖԻԱՍ գրասենյակի աշխատակիցների, լրագրողների և այլ հյուրերի համար	մարդ	220	2	12 500	5 500 000
50	Հեռախոսային բջջային կապի քարտային ծառայություն 70 հատ, 3000 դրամով	ծառայություն	1		210 000	210 000
51	Աուդիտի ծառայություն	ծառայություն	1		980 000	980 000
52	Մեդիա ծառայություն /Ֆոտո, վիդեո նկարագրություն, ֆիլմի նկարահանում	ծառայություն	1		4 000 000	4 000 000
53	Ծաղիկներ մասնակից կանանց և աղջիկների համար	փունջ	120		7 000	840 000
54	Մոնիտորների և համապատասխան սպասարկող սարքերի ձեռքբերում	համակազմ	4		1 000 000	4 000 000
55	Միջոցառման բեմականացման ծրագրի ծառայություն	ծառայություն	1		43 025 000	43 025 000
	ԸՆԴԱՄԵՆԸ					**245 595 400**
	ԱԱՀ*					49 119 080
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ					**294 714 480**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման Նախարարությանը:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ՝ գործառնական վարչություն
Հ/Հ 900011041226
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Նաֆարյան

Հ.Տ

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի սամբոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Նար-Դոսի 53,
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150074714400
ՀՎՀՀ՝ 06926461
Էլ. փոստ՝ info@sambo.am
Նախագահ՝

Մ. Հայրապետյան

Կ. Տ.